



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material







9(47.925)
Խ-17

ՍՏՈՒԳՎԱՍԻ Է 1961 Յ.

ԱՂԱԻԻՐՆԵՐ ՀՆԱԳՈՅՆ ՀԱՅՈՑ



ՊԱՅՄՈՒԹԵԱՆ

ԲԲ 4—5 տասնեակ տարի առաջ գիտնական աշխարհը արեւելեան ազգերի խորհրդաւոր անցեալն կը զննէր, ստիպւած կը բաւականանար Աստուածաշնչի հատուկոտոր տեղեկութիւններով եւ ինչ ինչ յոյն մատենագրերի զրոյցներով. շնայած որ եգիպտական մեհնադրոյժ գրերը¹ սկսած էին հետզհետէ փարատել այն թանձր խաւարը, որ կը ծածկէր Նեղոսի ալեւոր անցեալը, սակայն Սոււմերը, Ասորեստանցիք, Գաղղէացիք, Մարը տակաւին

¹ Եգիպտոսի գրաւոր յիշատակարանների առաջին դիւար տեղի ունեցաւ Նապոլէոնի արշաւանքի ժամանակ 1769 թ. Ռոզետտայում:

ԱՂԱԻՐՆԵՐ Հ. ՆԱԳՈՅՆ ՊԱՅՄ.

22819
A 33416
II



չէին բացարեւ իրանց պատմութեան էջերը գիտութեան բեմի առջեւ: Նախանձելի դրութեան մէջ չէր նաեւ Հայոց նախնական պատմութիւնն. գիտնականաց բոլոր փափաքը կը յագեցնէին խորենացին, Հերոդոտ եւ Քսենոփոն, որոց ստուգութեան եւ արժանահաւատութեան մասին գրեթէ ոչ ոք չէր կասկածում:

Բեւեռագիր արձանագրութեանց ընթերցման սքանչելի գիւտը ի լոյս հանեց առաջաւոր Ասիոյ հազարաւոր տարիներէ ի վեր կորուսած, մոխրակոյտերի տակ թաղած փառքը. հանդէս եկան ազգեր, որոց անունները մինչ այն ոչ մի գիտնականի ծանօթ չէին: Յայտնի եղաւ, որ Հայաստանի հնագոյն բնակիչք Բաբելոնէ գաղթած Հայկ նահապետի բազմացած սերունդը չէր, այլ մի խրոխտ ազգ, որ Թ. դարում Ն. Բ. կը ճգնէր կորզել Ասորեստանի ձեռից գերիշխանութիւնը հին աշխարհի վերայ. նորա թագաւորները՝ երկար լուութիւնից յետոյ՝ կրկին լեզու ստացան եւ սկսեցին մեզ մի առ մի թւել իրանց յաղթական արշաւանքները, նւաճած ազգերը եւ խաղաղ ձեռնարկութիւնները, յաւերժացրած նոցա ցիր եւ ցան յիշատակարաններում:

Միւս կողմից խորենացու աղբիւրների ուսումնասիրութիւնն հանդէս բերեց մի շարք խոշոր պատմական հակասութիւններ եւ խախտեց նորա բազմադարեան հեղինակութիւնն. խնդիրս՝ ըստ իւր արժանաւորութեան՝ զբաղեցրեց եւ դեռ կը զբաղեցնէ բազմաթիւ եւրոպացի

եւ հայ գիտնականներ, սակայն հեռու չէ այն
 ժամանակը, երբ մեր 'պատմահայրը, իւր վերջ-
 նական դատավճիռը կը ստանայ:

Այս թանգագին գիւտերը կատարեալ
 յեղափոխութիւն յարուցին հայ պատմութեան
 առաջին էջերում, ընդարձակեցին նորա սահ-
 մանները եւ բնականապէս յուզեցին մի շարք
 հետաքրքրական խնդիրներ՝ ի՞նչ ցեղի կը պատ-
 կանէր այն ազգը, որ ասորեստանի թագաւոր-
 ներ Ուրուրու- երկրի անւամբ են մկրտած եւ որ
 ինքն իրան խուրի աստուծոյ ծառաներ կը կոչէ,
 ի՞նչ վիճակի հանդիպեցաւնա՞մ, երբ է. դարում
 Ն. Բ. նոր ազգերի հեղեղատը կործանեց նորա
 զօրութիւնը, ի՞նչ առընչութիւն ունէրնա Հայե-
 րի հետ, երբ եւ ուստի եկան Հայք իրանց
 այժմեան բնակատեղը, իբրեւ խառնուրդ թէ
 իւր ցեղական առանձնայատկութիւնները պահ-
 պանած մի ազգային անհատ, ի՞նչ ժառանգեցին
 նորա Ուրարտացիներից եւ այլն եւ այլն: Նորա-
 գիւտ աղբիւրների մատակարարած նիւթը սա-
 կայն անզօր կը հանդիսանայ այս մթին խնդիր-
 ները լուծելու համար. դժարութիւնն առաւել
 եւս կը ծանրանայ նորանով, որ ուրարտեան
 լեզուի լուսաբանութիւնն բազմաթիւ խոչնդոտ-
 ների կը հանդիպի: Հարկաւ՝ նիւթի աղքատու-
 թեան շնորհիւ՝ ուսումնասիրաց առջեւ լայն
 ասպարէզ կը բացւի զանազան հետաքրքրական,
 շատ անգամ միմեանց հակասող, երբեմն սրա-
 միտ կամ խորիմաստ ենթադրութեանց: Կարճ
 միջոցում հանդէս եկաւ մի ճոխ գրականու-

Թիւն, որ Հայոց Տնութեան փոշին Թօթափել
կը ճգնի:

Հայ գիտական մամուլը, քաջ ըմբռնելով
Հայ պատմագրութեան նոր ընթացքի լրջու-
թիւնն, աշխատել է իւր ընթերցողներին ծա-
նօթացնել օր ըստ օրէ լոյս տեսնող օտարազգի
գրիչների ուսումնասիրութեանց հետ. աւելորդ
կը համարեմ յիշեցնել, որ 'Հանդէսը, նա-
խանձելի եռանդով շտապել է իսկոյն լոյս ըն-
ծայել եւ կը շարունակէ լոյս հանել այս երկերը
ծայրէ ի ծայր Թարգմանութեամբ կամ ընդար-
ձակ տեսութեամբ, իրրեւ ուսումնասիրութ, որ
անկասկած առաջին տեղը կը բռնէ մեզանում:

Չնայելով տարիներով կուտակած հա-
րուստ նիւթին՝ տակաւին փորձ չէ եղել մեզա-
նում այս գրականութեան զարգացման ընդ-
հանուր պատկերը գծել եւ նորանում նոր հիմ-
քեր որոնել մեր նախնական կցկտուր պատմու-
թիւնն վերականգնելու համար: Ո՛րչափ քաղցր
աշխատանք է՝ գրչի խորիմաստ շարժմամբ կրկին
կեանքի հրաւիրել սերունդներ, որոց յիշատակը
տասնեակ դարերէ ի վեր մոռացւած է, խիզախ
Թագակիրներ՝ որոնք արիաբար մարտնչել են
յանուն ազատութեան երկրի եւ ի փառս իրանց
ազգի: Սակայն գործս որչափ էլ գեղեցիկ է,
նոյնչափ էլ բարդ եւ պատասխանատու. հեղի-
նակը՝ իւր երկը լուրջ գիտական սահմանների
մէջ պահելու համար՝ պէտք է առնւազն

ա. քաջ ծանօթ լինի գրականութեանս
վերաբերեալ քուլտուրայի ուսումնասիրութեանց հետ

եւ մատնացոյց անէ առանց բացառութեան այն կարծեաց վերայ, որոնք որոշ խնդիրներ Նոր տեսակէտով կը շօշափեն. (հարկաւ յիշելու է հեղինակի անունն եւ նորա գործը):

բ. Հայ պատմութեան այս հեռաւոր խորշերը լուսաւորելիս նա պէտք է հիմնուի պատմական փորձերի վերայ, խստիւ զատելով նոցանից եկեղեցիականներ, որոց արժանաւորութեան մասին միայն ապագան կարող է վճիռ արձակել:

գ. Նմանապէս նա զգուշանալու է պատմական անձնաւորութիւնք շփոթելու հետեւին՝ հերոսների հետ, որոնք մեր հին ժողովրդական բանահիւսութենում ընդարձակ տեղ են գրաւել, հրապուրելով խորենացուն իրանց փայլուն շահատակութիւններով:

Այսպիսի մի նախափորձ, ձեռնարկած է նորերս Սկսնակ Բանասէր¹ (Դր. Ցաղաւարեան), որի նպատակն է եղել՝ իւր 'ձեռք բերած ծանօթութեանց շնորհիւ շատերու գաղափար մը տալ այս նախնական շրջանի ազգային պատմութեան մասին եւ իբրեւ առաջնորդ ծառայել՝ գիտնոց եւ բանասիրաց հետազօտութեանց հետեւելու: Պատուակա՛ն նպատակ: 30 էջէ բաղկացած փոքրիկ աշխատասիրութեան հեղինակը դեռ իւր յառաջաբանում կը խոստանայ բաժանել իւր երկը երեք մասերի, որոնցից առաջինն Նւիրլած պէտք է լինի երկրի հին բաժանմանց,

1 "Պատմութիւն Հայոց Ի սկզբանէ մինչ ցԱրշակունի հարստութեան հաստատութիւնը" (հանուած "Բանասէր, հանդէսէն հտ. Ե) Պարիս, 1903:

անւան, ժողովրդի լեզւի, ցեղի եւն խնդիրներին. երբեք մասն պարունակելու է 'Հայուն մինչ ցԱրշակունի հարստութիւն քաղաքական պատմութիւնն, երբեք պէտք է հանդիսանայ 'այդ ժամանակամիջոցի քաղաքակրթութեան պատմութեան նախափորձն, : Այս ընդարձակ ծրագիրը կը պահանջէ հարկաւ ոչ միայն բաւարարնիւթ, այլ եւ վերին աստիճանի զգուշութիւն, եթէ չասենք հմտութիւն, հեղինակի կողմից՝ նորատրամագրութեան տակ գտանուող խառնիխուռն, հատուկտոր աղբիւրների նկատմամբ :

Գր. Տաղաւարեանի փորձը արժանի է գովասանաց, սակայն մենք համոզւիլ կամինք, թէ արդեօք հասել է հեղինակը իւր նպատակին, այսինքն՝ իրօք ճիշդ գաղափար է տւել նա ընթերցողին "այս նախնական շրջանի ազգային պատմութեան մասին" :

Ա.

Առաջին մասնում, խօսելով երկրի հին բաժանման, անւան եւ Հայերի ցեղական ծագման մասին, հեղինակը մի ըստ միօրէ համառօտիւ կը թւէ եւրոպացի գիտնականաց կարծիքները, սակայն մեզ տարօրինակ կը թւի, որ նա՝ յիշելով Լեւանի, Ե. Մայերի, Ենսընի տեսութիւնները, այլ ուսումնասէրներին բարեհաճել է մասամբ բնաւ բաց թողնել, մասամբ նոցա անուններն "ոմանք" անորոշ բառով քողարկել. "ըստ ոմանց՝ հայ անուանակոչութիւնն խալդի կամ Հալդի Աստուծոյ անունէն

եկած է (էջ 5)... ոմանք ըստ եբրայականին
 Հ-ը-Մընէն եկած կը կարծեն այս բառն
 (էջ 6)... ոմանք աւելի հին կը համարին այդ
 բառն (էջ 7)¹: Հազիւ թէ այս անորոշ
 դերանունը կարողանայ հեղինակի նպատակին
 յարմարիլ եւ «շատերուն առաջնորդ ծառայել՝
 գիտնոց եւ բանասիրաց հետազօտութեանց
 հետեւելու»: Այդ մի: Սկ. Բանասիրին պէտք է
 յայտնի լինէր ծանօթութիւններ ձեռք բերելիս,
 որ Kiepert, հակառակ վերեւում յիշած գիտ-
 նականաց, Հայերի հնագոյն հայրենիքն Ա-
 րարսի հովիտը, վանայ ծովի հարաւ-արեւ-
 մտեան ափերը եւ Արածանիի վերին հոսանքը
 կը համարէ²: Winckler կը կարծէ, որ Նիմերներ
 (եւ նոցա հետ Հայեր) Վովկասի լեռները ձեղ-
 քելով մտան ի Հայս եւ՝ հանդիպելով Ու-
 րարտացիների կողմից դիմադրութեան՝ յերկու
 մաս բաժանեցին, որոնցից մին դէպի արեւ-
 մուտք, միւսն՝ հարաւ-արեւելք մինչեւ Ուրմիոյ
 ծովը առաջացաւ³: Չէ յիշած նմանապէս
 Kretschmerի ենթադրութիւնն, թէ Հայք փոխ-
 գիայից եւ Թրակիայից իրանց պատմական բնա-
 կատեղը եկան³: Murad հակած է Ե. Մայ-
 րի նախագոյն կարծիքը ընդունել, թէ «հնա-
 րաւոր է, որ Հայք դեռ հնագոյն ժամանակներ

¹ Lehrbuch d. alten Geographie, §§ 74, 76, 90-
 100. եւ Ueber älteste Landes- und Volksgeschichte v.
 Armenien, 229, 235.

² Babylonisch-assyrische Geschichte.

³ Einleitung in die Geschichte der griechischen
 Sprache էջ 208.

երկրում նստած էին, բայց նմանապէս հնարաւոր է, որ նոքա Ասորեստանեայց իշխանութեան անկումից յետոյ արեւելքից կամ արեւմուտքից գաղթած են եւ երկրի հնագոյն բնակիչներին յետ մղած¹:

Ձանց առնելու չէր հեղինակը նաեւ մեր հին մատենագրերի ազգիս վերագրեալ «տուն թորգոմայ»,² «ազգ Ասքանազեան»,³ ցեղանուններն, որոնք գրաւած են գիտնականաց ուշագրութիւնն. ըստ Fried. Delitzschի Ծննդոց (10, 3) Togarma տեղին համապատասխան է սեպաձեւ արձանագրութեանց Tilgarimmu ամրոցին ի Մալաթիայ.⁴ Kiepert սակայն նոյն տեղին Հայոց հարաւ-արեւմտեան մասն կը կարծէ: Միւս կողմից Murad⁵ Ծննդոց ԱԶՄՆ (աշինաշ) ազգը Փռիւգացիք (Φρύγες) կը համարէ, որոնք հնումն Askan կը կոչէին. այս հիման վերայ Հայք Փռիւգիայից կը սերէ, նոցա հնագոյն հայրենիքն թրակիայում որոնելով. իսկ S. Weber⁶ հակած է բացի այդ եւս ընդունել, (եթէ ճիշդ է թորգոմ = Tilgarimmu համեմատութիւնն), որ Հայք նախապատմական

¹ Ararat und Masis, 1901, էջ 11.

² Ագաթանգեղոս, Փաւստոս, Խորենացի:

³ Խորենացի, Յովհաննէս կաթ., Ասորական, Կորիւն:

⁴ Wo lag das Paradies? 1881, էջ 246.

⁵ Նոյնտեղ էջ 16. Հմմտ. Kretschmer էջ 191. Schrader, Keilinschrift. u. Geschichts. 160. Friedr. Delitzsch սակայն Ծննդոց (10, 3) Աշինաշ բեւեռագրերի Ašguza երկրի անուն հետ կը համեմատէ:

⁶ Die katholische Kirche in Armenien, 1903, էջ 12.

ժամանակ երկրի հարաւ-արեւմտում կը բնակէին:

Արժանի են ուշագրութեան նաեւ մարդաբանների (anthropologue) կարծիքները Հայոց ցեղական ծագման մասին, որչափ էլ տարբեր լինին այս կարծիքներն: Չնայելով որ գիտութիւնս համեմատաբար դեռ նոր է եւ նորա եզրակացութիւնները շատ անգամ անհաստատ են, սակայն ուսումնասիրաց ձեռնարկած փորձերը հայ ժողովրդի մարմնակազմութեան նկատմամբ մի եւ նոյն հետեւանքն են տւել՝ Հայք կը պատկանին ծայրայեղ Բր-ի-ի-ֆ-ը-ն-ը-ն (կարճագլուխներին):¹ F. von Luschan,² ենթագրելով, որ Բր-ի-ի-ֆ-ը-ն-ը-ն տիպը հնագոյնն կը հանդիսանայ Փոքր Ասիայում (իբրեւ նմոյշ կը ծառայեն Հիտիտները կամ Հատերը խորագիր քարարձանների վերայ), Հայերին կը համարէ Բր-ի-ի-ֆ-ը-ն-ը-ն, որոնք իրանց ցեղական տիպը պահպանած են հարեւան ազգերի բոլոր ազդեցութիւններից ազատ: Դ-ի-ի-ֆ-ը-ն-ը-ն (երկայնագլուխ) ցեղերը, որոց գլխաւոր ներկայացուցիչք Սեմացիք են, տարածւել են համեմատաբար շատ առաւել ուշ հարաւային Արաբիայից Եւրոպայ: Virchow աւելի եւս հեռու կը գնայ, համարելով հայկական Տրովագայում,

¹ E. Chantre: Recherches anthropologiques dans le Caucase T. IV. 1887. Rapport sur une mission scientifique en Arménie russe, 1893. Erkert: Kopfmessungen kaukasischer Völker.

² Die Tachtadschy und andere Ueberreste der alten Bevölkerung Lykiens.

Բիւթինիայում եւ Աստուում պեղած գագաթները, (որոնցից հնագոյնը մինչ 2000 տ. ն. ք. յետս մղելու է): Հակառակ այս կարծեաց G. Sergi¹ կենթադրէ, որ Գոլիթիֆալ տիպը դեռ նախապատմական ժամանակները տարածւել էր Եգիպտոսից Փոքր Ասիա եւ ամբողջ Եւրոպա եւ միայն ժամանակի ընթացքում, երբ Ասիայից արեւմուտք գաղթեցին արիական ցեղերը, մասամբ խառնւեցաւ եկւոր «բրախիկեֆալ» տիպի հետ, մասամբ հետզհետէ անյայտացաւ: Այս տեսութեան համաձայն ուրեմն Հայերը՝ իբրեւ Արիացիք՝ ելին ազգ են: Եւ այն կարծիքին է նաեւ D. Анучинъ,² որ «գոլիթիֆալ» տիպը որբորեւն կը համարէ, իսկ «բրախիկեֆալն» նորագոյն, եկւոր, հայնն:

Կարծեաց այս տարբերութիւնը կ'ապացուցանէ, որ խնդիրս տակաւին անորոշ դրութեան մէջ է. նորա բաւարար լուծման համար մեզ անշուշտ կը պակասին նոր աղբիւրներ, որոնք աւելի առատ լոյս են սփռելու Փոքր Ասիոյ մթին անցեալի վերայ:

Մինչդեռ հայ ազգի նախահայրենիքն անյայտ կը մնայ, հայ լեզուի ուսումնասիրութիւնն անկասկած մեծ առաջադիմութիւն է արել վերջերս. հակառակ de Lagardeի եւ Fried. Müllerի կարծեաց, թէ հայկականն իրանական

¹ Ursprung und Verbreitung des mittelländischen Stammes. (Uebersetzt von Dr. Byham), 1897.

² Армяне въ антропологическомъ и географическомъ отношеніи (Братская помощь).

է, Hübschmann¹ ապացուցեց, որ նա հնդ-եւրոպական լեզուների ընտանեաց արմատներէն կը հանդիսանայ. այս ենթադրութիւնն սակայն հիմնած է մեր մատենագրերի, ուրեմն մեր հին գրական լեզուի ուսումնասիրութեան վերայ, մինչդեռ նոցա ժամանակակից խորհրդանշան լեզուն իւր բազմութիւ գաւառաբարբառներով՝ մի թանգագին պատմական գանձ՝ մեզ համար ընդ միշտ կորած կը մնայ²:

Սկ. Բանասէր՝ նիւթին համաձայն՝ իւր երկի սկզբում գծել է հին Հայոց քաղաքական բաժանմունքը. սակայն այս քարտէսը՝ չհամապատասխանելով ճշդիւ մեր աղբիւրների ցուցմանց՝ հազիւ թէ կարող է աջող համարուիլ: Հաստատապէս իմանալով, որ «Ուրարտի (Արարատ) վանայ ծովուն հիւսիսակողմն, Բիանա՝ վանայ ծովուն արեւելակողմն էր», հեղինակը այսկերպ երկու իշխանութեանց կը բաժանէ ուրարտեան տէրութիւնն, որ Ը. դարում՝ իւր շքեղ ծաղկման ժամանակ՝ Մալաթիայից մինչեւ Գեղամայ եւ Ուրմիոյ ծովերը կը տարածւէր: Ճիշդ է Սաղմանասար Բ. (860—825), անցնելով վանայ ծովի հիւսիսակողմն, առաւ եւ աւերեց «ուրարտեան» Արամեի Arzašku մայրաքաղաքն. ճիշդ է նաեւ, որ Biaina երկիրը իւր Tuspa (վան) մայրաքաղաքով հան-

¹ Armenische Grammatik, էջ 399-

² Տես Թումայ Արծրունի խումբայ լեւոնականների բարբառի մասին՝ «եւ յաղագս խրթնի եւ անհետազօտելի խօսիցն եւ բարուցն կոչին խութն». նոյնն կը հաղորդէ եւ արարացի պատմագիր Բեւազորի («Հայաստանի նաճուցն»):

դերձ Սարգուր Ա.ից սկսեալ իբրեւ տէրութեան կենդրոնն կը յիշուի, սակայն մենք չունինք ոչ մի պատմական փաստ, որ Վանայ ընդարձակ տէրութեան կից կը ծաղկէր մի առանձին «ուրարտեան իշխանութիւն», մենք ունինք հակառակ ապացոյց՝ նոյն Սաղմանասար Բ. դեռ իւր արշաւանքի ժամանակ դէպի Նախ-րեան երկիրները, գրաւելով նախ Խուրուսկու իշխանութիւնն (Ուրմիոյ ծովի հարաւորեցող), այնտեղից անմիջապէս մտաւ ուրարտացի Արամէի երկիրը (տես ստորեւ): Ուրեմն վերջինիս սահմանները նոյն իսկ Վանայ ծովից հարաւ կը տարածուէին: Շատ հաւանական է, որ Ուրարտա տէրութեան հնագոյն գաւառի անունն էր,¹ որ ապա ամբողջ երկրի վերայ անցաւ. թերեւս Սարգուր Բ-ի յիշած (երկիր) Ուրարտիէն անու-նիս ուրարտեան ձեւն է: Schrader² եւ Никольский³ կը կարծեն, որ Ուրարտացոց օրօրոցը Արաքսի հովիտն էր, որի յիշատակը մեր մատենագրերի «Արարատեան գաւառ» անւանա-կոչութեան մէջ կ'ապրի.⁴ Երկրի անապահով դիրքը երեւի ստիպած է նոցա իշխաններին

¹ Belck-ի հետ համաձայն է Lehmann (Verhandl. d. Berl. anthrop. Ges. 1899, էջ 587, որ Urartu «խաղչեան տէրութեան գաւառներէից մէկն էր»:

² Zur Geogr. d. assyrischen Reiches BAW, 1890, էջ 333. Հմմտ. Streck, das Gebiet d. heutiger Landschaften von Armenien, Kurdistan und Westpersien, ZA, 1898.

³ Древняя страна Урарту („Вратская помощь“).

⁴ Հմմտ. վերեւում յիշած Kiepert-ի կարծիքը:

փոխադրել տերութեան կենդրոնը դէպի
Հարաւ:

Ոչ պակաս հետաքրքրած է գիտնական-
ներին երկրիս մթին անունն. Sayce-ի ենթա-
դրութիւնն, որ Urartu (= Urtu) ըստ Ասորես-
տանեայց Բուքի երկրի կը նշանակէ,¹ Սկ. Բանասէր
Գրիգորի է ընդունած, առանց բաւարար
հիմք ունենալու. (ի դէպս կը նկատենք, որ
պարոնի ցուցած Uštu իբր = Urartu արձանա-
գրութիւններում չէ յիշուում): Ըստ իս' խորե-
նացու երիցս յիշած Որդունի նախարարեան
տոհմը² թերեւս իւր անւան մէջ ուրարտեան
ցեղերից մէկի խուլ յիշատակն պահած է:
Առաւել մեծ անզգուշութիւն էր Սանտալ-
ճեանի կողմից՝ անունս հնդ-եւրոպական(!)
յայտարարել՝ իբր օմր(η) = լերնի եւ ἄρτα
= Բուքի բառերէն բարդեալ.³ արիական
ցեղի (կամ ցեղերի) Թ. դ. ն. ք. յարեւմուտս
գաղթման մասին պատմութիւնն տեղեկութիւն
չունի:

Նմանապէս որ եւ է հիմքից զուրկ է
Սանտալճեանի Sayce-ից ժառանգած մեկնու-
թիւնն, (որ առանց տատանելու ընդունած է
Սկ. Բանասէր), թէ Նուրի, Նուրի «գետոց երկիր»
կը նշանակէ.⁴ Ըստ յայտնի ասորագէտների
(Fr. Delitzsch, Winckler) անունս ոչ մի առըն-

¹ Journal of the royal asiatique Society, 1882.

² Մ. Խորենացի, Վե՛ն. 1881, Ա. 58, Բ. 173, Գ. 401:

³ Հանդէս Ամս. 1901, էջ 54:

⁴ Նոյնտեղ, էջ 58:

չութիւն չունի սեմական 𐌌𐌆𐌆, 𐌆𐌆, nāru, 𐌆𐌆𐌆
 բառի հետ: Սկսնակ Բանասերի համար հարկա-
 դա մեծ յանցանք չէ. սակայն նա ճիշդ չէ
 որոշել վերոյիշեալ երկրի նոյն իսկ դիրքը, որ
 ըստ նորա «Խորենացու Աղձնիք եւ Ծովիք նա-
 հանգաց կը համապատասխանեն».¹ Նաիրէ
 (Nairi) երկրէն անորոշ անւամբ յայտնի է
 սեպածեւ արձանագրութիւններում մի ընդար-
 ձակ տարածութիւն, որ վանայ ծովի արեւ-
 մտեան ափերից մինչեւ Ուրմիոյ ծովից արեւ-
 մուտք կը ձգէր, որոյ վասն Ասորեստանեայց
 Թագաւորք առաջինն վերէն Նաիրէ Զ՝, երկրորդն՝
 «Կորէն Նաիրէ Զ՝ կը կոչեն. Տիգղատպալասար
 Ա (իբր 1110 Ն. Ք.) յիշատակած է 23 Նաիրի
 իշխանութեանց անուններ, որոց մեծամասնու-
 թիւնն Խորենացու Աղձնիք եւ Ծովիք գաւառ-
 ներից միանգամայն դուրս կը գտանւէր. Շամշի
 Բամման (825—812) երրորդ անգամ Նաիրի
 երկիրը արշաւելիս կ'անցնի Ջաբան գետը
 (Կալքի մօտ) եւ Նաիրէ իշխանից նորա խուբուշ-
 կու քաղաքում հարկ կ'առնի: Սարգոն 715 թ.
 ընդունեց նոյն քաղաքում Նաիրէ իշխանի ըն-
 ծաները:

Միանգամայն սխալ է որոշած Դր. Տա-
 ղաւարեան Մուսասիր երկրի (եւ համանուն
 քաղաքի) դիրքը, որ նա Մուշ (!) կը համարէ.
 ասուրական աղբիւրներին նայելով այս փոքրիկ
 իշխանութիւնն կը գտանւէր Ուրարտեան եւ

¹ Սկ. Բանասեր, էջ 4:

ասորեստանեայց տէրութեանց միջեւ.¹ Սաղմանասար Բ. 829 թ. հարկ առնելով Խուբուշկուհի իշխանից, այնտեղից «նիլ-ուէ» մտաւ Մուսասիրի սահմանները:² Սարգոն 714 թ. առաւ եւ աւերեց Մուսասիր քաղաքը, գալով Մարաց երկրից:³

Ինչպէս տեսանք, Դր. Տաղաւարեանի «Հայոց պատմութեան» Ա. մասն, որ երկրի հին բաժանման, ցեղի եւ այլն խնդիրներին է նւիրած, ոչ միայն «նիլ-ուէ» է, այլ եւ սխալ տեսակէտերից ազատ չէ:

(Թոյլ ենք տալիս մեզ Պարոնի Խոյրէի գրութիւնն, մեր մատենագրերին⁴ համաձայն Խաղոփ ուղղել:)

Բ.

Երկրորդ մասն բուն Հայոց պատմութիւնն է «ի սկզբանէ մինչ ցԱրշակունի հարստութեան հաստատութիւնը»: Ինչպէս ինքն հեղինակը իւր յառաջաբանում իրաւացի կը նկատէ՝ «դեռ ժամանակն հասած չէ Հայկուէն անուանեալ այս կարեւոր շրջանի իսկական պատմութիւնն գրելու». կը մնայ ուրեմն «հաւանական» պատմութեան ձեռնարկել: Սակայն որտեղ է որոնելու այդ «հաւանականի» սահմանները.

¹ Lehmann, Verhandl. d. Berl. anthrop. G. 1899. Helmolt. Weltgeschichte, Urartu (von H. Winckler).

² Salm., Nimrud-Inschrift, 177—180.

³ Sargon, Prunk. 65—74.

⁴ Մ. Խորեն. 161, 333, 495. Եղիշէ, Վե՛ն. 1898, էջ 176, 235, 238. Ագաթանգ. Վե՛ն. 1835, էջ 624:

արդեօք այն ենթադրութեան մէջ, թէ մեր
 «պատմահօր», մօտ ժողովրդին ախորժելի
 առասպելական քօղի տակ պատմական «դէմքեր
 եւ դէպքեր», կը թագնւին, թէ մեր նորագոյն
 աղբիւրները մեզ լինովին իրաւունք են տալիս՝
 բեւեռագիր արձանագրութեանց թագաւորների
 եւ «հայկազն» դիւցազնների մէջ աւընչութիւն
 որոնել:

Թէ ինչպէս կը լուծէ այս խնդիրը Սկ.
 Բանասէր, կը տեսնենք իսկոյն. բայց նախ հետ-
 եւեկնք նորան՝ Հայոց պատմութեան «սկիզբն»,
 պարելու:

Երկրիս քաղաքական դրութիւնը դժար
 չէ մեզ պատկերացնել նոյն իսկ Ժ.Ձ. դարում(!)
 Թէքացի Փարաւոնների իշխանութեան ներքոյ,
 ճիշդ է, մօտաւորապէս այս ժամանակ Եգիպ-
 տացիք՝ սթափւելով դարաւոր թուլութիւնից՝
 արտաքսեցին երկրից ասիացի Հիւքսոսներին եւ՝
 երեւի հետամուտ լինելով նոցա՝ յաղթու-
 թեամբ մտան Ասորիք. սորանով սկսեցաւ
 18—րդ փայլուն հարստութիւնն, որ 1600ից
 մինչեւ 1200 թ. ն. ք. տեւեց: Սակայն Եգիպ-
 տացոց քաղաքական ազդեցութիւնն հարաւային
 Ասորիքից հեռու չանցաւ. հիւսիսային Միջա-
 գետք եւ հիւսիսային Ասորիք այն ժամանակ կը
 կազմէին Միտանի իշխանութիւնն, որ զօրեղ
 խոչնդոտ կը հանդիսանար Փարաւոններին՝
 դէպի Փոքր Ասիա առաջանալու համար:

Ամոսիս Ա. կռիւ միեց հարաւային Պաղես-
 տինում եւ Փիւնիկէում, նորա յաջորդ Թուա-



մէս Ա-ին աջողեցաւ մինչեւ Եփրատ հասանել,
որի ափին նա իւր յաղթական արձանագրու-
թիւնն կանգնեցրեց: Թուումէս Գ. (մօտ.
1500 թ.) ժԸ. հարստութեան ամենա-
նշանաւոր ներկայացուցիչը՝ 14 անգամ Ասորիք
արշաւեց, մի ապացոյց, թէ որչափ աննշան էր
այնտեղ Եգիպտացոց «յաղթութեանց» ազդե-
ցութիւնն. անցնելով Եփրատը եւ նւաճելով
հիւսիսային Ասորիքի մի մասը, ի միջի այլոց
յայտնի կարկեմիշ քաղաքը, նա սակայն չվստա-
հացաւ Միտանի իշխանութեան այս գաւառը
իրան յատկացնել եւ իբրեւ սահման պահեց Ռիհ
քաղաքը (երեւի Օրոնտէս գետի ստորին ըն-
թացքի մօտերը): Քիչ ժամանակից յետոյ
հիւսիսային Ասորիք մտաւ Հետիտների կամ
Հատերի իշխանութեան տակ:¹

Հայոց Եգիպտացիներից դարուոր նւաճման
մասին այսպիսով ոչինչ չգիտենք, հետեւաբար
Սկ. Բանասիրի եզրակացութիւնը՝ թէ «Եգիպ-
տացիք դար մը միայն այս երկրին տիրելէ ետքը,
ի մէջ կոյս 15-րդ դարու (1440ի տոններն)՝
քաշուեցան», զուրկ է որ եւ է հիմքից:

Լոկ բառախաղ կը լինէր Թուումէս Գ-ից
յիշած ի շարս այլ տիրած երկրների Րիհէն
աշխարհը Արմենիա (?) կարծել:

Ապա ժէ. դարից կը սկսի «Ասորեստա-
նեայց ազդեցութեան ժամանակը»: Մենք չենք
կամենում զանց առնել այն հանգամանքն, որ

¹ Max Müller, Die alten Aegypter als Krieger
(Der alte Orient, Heft 1. 1903, 16-19)-



Բարեւոյն՝ լինելով Հայոց մերձաւոր հարեւանն՝ դեռ հնուօրէն կարող էր նորա քաղաքական դրութեան վերայ որոշ չափով ազդել. սակայն մեր նիւթը թոյլ չէ տալիս մեզ թափանցել հնութեան այդ մութ խորշերը՝ որ եւ է «ազդեցութեան» հետքեր որոնելու համար։¹

Մեր առաջին «ոյ՛» տեղեկութիւնները Ասորեստանի եւ Նաիրի իշխանների ընդհարմանց մասին կը սկսին միայն Տիգրատպալասար Ա-ից (իբր 1110 ն. Ք.)։ Երկրի անմատչելի դիրքը եւ բնակչաց կտրիճ ոգին պատճառ էին, որ Ասորեստանցիք երբեք չկարողացան այստեղ իրանց իշխանութիւնն լիովին հաստատել, ստիպւած բաւականանալով ժամանակաւոր «նւաճմամբ»։ Հարկաւ հարաւից սպառնացող վտանգն պէտք է ստիպէր տեղային իշխաններին՝ միացնել իրանց ոյժերը ընդհանուր թշնամու դէմ. բնական է նաեւ, որ ժամանակի ընթացքում այս դաշնակցութեան գլուխը կարող էր անցնել նոցանից հզօրագոյնն. արդեօք դեռ Արամէն Նաիրի դաշնակցութեան ղեկավար է հանդիսացել, ինչպէս կը կարծէ Սկ. Բանասէր,² դժար է ենթադրել (տես ստորեւ)։ Այս

¹ Ասորեստանի թագաւոր (885—860), ցանկաւով յաւերժացնել իւր նախահօր՝ Սաղմոնասար Ա-ոյ (իբր 1330 ն. Ք.) դարձերը՝ միայն 4 տէրմ կը յիշէ Նաիրի երկիրը, որի դէմ նա «բնակիչներ հաստատած էր»։ Սանտալեանի ենթադրութիւնն, թէ Նիբէ (R&W. III, 3) սղուօն է Նաիրի անունն, անհիշեալ է։

² Նոյնտեղ, էջ 11։

պատիւը աւելի շուտ վերագրելու է Սարգուր Ա-ոյն, որ իրան «բայեց արայ, Բէայնայի Բախաւոր եւ Նեբէի էշեան կ'անւանէ. Lehmann¹ ոչ առանց հիմքի կ'ենթադրէ, որ «Նաիրի ցեղերը միացան եւ կազմեցին Նաիրի տէրութիւն մի հզօր իշխանի՝ Սարգուր Ա-ոյ, Լուտիպրիտ որդու ներքոյ,»

Արամէն յանկարծակի հանդէս է գալիս պատմութեան մէջ եւ նոյնպէս յանկարծակի անհետանում. չէ մնացել նորանից եւ ոչ մի յիշատակարան. յայտնի է միայն, որ 860 թ. Սաղմանասար Բ., յաղթելով Նաիրի թագաւոր Կակիա'ին եւ առնելով նորա Խուբուշկու մայրաքաղաքը, այնտեղից, (այսինքն Ուրմիոյ ծովի հարաւ-արեւմտքից) անմիջապէս մտաւ ուրարտացի Արամէի երկիրը եւ գրաւեց նորա Սուգունիա բերդաքաղաքը:² Սակայն այս յաղթութիւնը երկարատեւ չէր, որովհետեւ երեք տարի անց Սաղմանասար Բ. ստիպւած եղաւ կրկին Արամէի դէմ արշաւելու. այս անգամ նորան աջողեցաւ, անցնելով Աղձնիք եւ Դայաէնի գաւառները, նւաճել Արամէի Արզաշկու(նու) թագաւորանիստ քաղաքը, որ վանայ ծովի հիւսիսակողմն պէտք է գտանւէր.³ Արամէն շտապեց ապաստանել անանց լեռներում:⁴ Իւր թագաւորութեան Ժ. տարին Սաղմանասար

¹ Verh. d. Berl. anthrop. Ges. 1900, 36.

² III Raw. 7-8.

³ Billerbeck (Das Sandschak Suleimania). քաղաքս Բինգեու-Դաղից հարաւ-արեւելք կամ որսնել:

⁴ Obelisk von Nimrud, 43-44.

դարձեալ զինեցաւ իւր անհնազանդ ախոյեանի
դէմ եւ գրաւեց նորա Առնէ մայրաքաղաքն:¹
Արշաւանքն կրկնեցաւ եւ հետեւեալ տարին
(Lay. 15, 39):

Չնայելով նիւթիս աղքատութեանն, աչքի
կ'ընկնին 3 հետաքրքրական երեւոյթներ. . . ուր-
արտեան իշխանութիւնը արդէն թ. դարում,
ունենալով իւր մայրաքաղաքն Վանայ ծովի
հիւսիսակողմն, այնտեղից առնւազն մինչեւ նորա
հարաւային ափերը կը տարածւէր.² Ք. այս իշ-
խանութեանն սահմանակից էր Նաիրի թագա-
ւորութիւնը իւր խուբուշկու մայրաքաղաքով.
ուրեմն Արամէն ոչ մի կերպ չէր կարող Նաիրի
երկիրների ընդհանուր դաշնակցութեան գլուխը
կանգնել. 4. արդէն թ. դարում Ուրարտու
(չորիցս!) արիաբար կը դիմադրէ Ասորեստանին.
չնայելով իւր համբաւաւոր «յաղթութեանց»
Սաղմանասար Բ-ին այնպէս էլ չաջողեցաւ իւր
հակառակորդի դից անդրինները գերել, որ հին
արեւելքում հաւասար էր իշխանութեան
բարձման:³ Արամէն մնաց ողջ եւ իցէ իւր
մայրաքաղաքը փոխադրեց աւելի անառիկ
տեղեր. հետեւաբար մենք բաւարար հիմք
չունինք, հետեւելով Սկ. Բանասիրին, նորան

1 Ob. 86. Lay. 15, 31. Թերեւս այժմեան Առնիս
դիւղաքաղաքն է Վանայ ծ. հիւսիս-արեւելք:

2 Billerbeck Սուգուշիա Բահամուում կը պարէ:

3 Ինչպէս Սարգոն, գերելով Մոսսուրէի խաչիս
եւ Բազարթուս դից անդրինները, վերջ դրեց այս իշխանու-
թեանն: Հմմտ. եւս Tešub-ի անդրիի գերութիւնը Մաւա-
թիայից ի մեռն Սարգոնի:

իրբեւ «Սաղմանասարէն չարաչար յաղթուած իր ուրարտեան հարստութեան վերջին թագաւորը» համարել:¹

Թոյլ ենք տալիս մեզ ի դէպս նկատել, որ հակառակ Դր. Տաղաւարեանի ցուցման՝ արձանագրութիւնում Արամայի չէ յիշատակւած իրբեւ (Արղաշկուի հետ հաւասար) մայրաքաղաք Արամէի:²

Մեզ տակաւին մթին կը մնայ մի խնդիր՝ ի՞նչ կապ ունէր Արղաշկուն Վանայ հետ, ի՞նչ առնչութիւն է որոնելու Արամէի եւ հետեւեալ «արարացի» թագաւոր Սարգուր Ա-ոյ հետ, որ իրան «Լուտիպրիսի որդի» կը կոչէ. ո՞վ էր ինքն Լուտիպրիս, ճիշդ է արդեօք, որ Սարգուր Ա. ոչ ուշ, ոչ շուտ քան 828 թ. «իր աթոռն Տուսպաս (Վան)» կը փոխադրէ»³ ենթադրութիւնք փաստեր չեն:

Յամենայն դէպս Վանայ խիզախ թագաւորների իշխանութիւնը երկրիս պատմութեան ամենափայլուն էջերից մէկը կը հանդիսանայ. Մենուաս եւ նորանից յետոյ Արգիստի Ա. եւ Սարգուր Բ. կ'ընդարձակեն երկրի սահմանները մինչեւ Արարատեան հովիտը, Արգիստի նոյն իսկ կը կորզէ Ասորեստանից նորա հիւսիսային գաւառները եւ կը նւաճէ արեւմուտք մինչեւ Մալաթիայ: Բնական է, որ նոցա հռչակի խուլ արձագանքն երկար դարեր կ'ապրէր

¹ Հմմտ. եւս Streck, ZA, XIV, 125.

² Salm. Mon. 56-58.

³ Սանտալեան, նոյնտեղ, էջ 67:

Ժողովրդի յիշողութեան մէջ, արժանի նիւթ
 ծառայելով բանահիւսութեան համար. եւ
 դա բնաւ զարմանալի չէ, երբ անգամ մեր ժա-
 մանակ ռուսաց «զրուցողները», կ'երգեն Յով-
 հաննէս Գոռոզի գործերը (16-րդ դար!), Սի-
 բիրիոյ նւաճումն եւ նորսնուժ հռչակած Եր-
 մակի քաջագործութիւնները. երբ հայ ժողո-
 վուրդը ցարդ սիրով ականջ կը դնէ Թ. դ.
 Սասնոյ կտրիճների շահատակութեանց զրոյց-
 ներին: Բայց եթէ խորենացուն անգամ ճանա-
 չենք իբրեւ բարեխիղճ բանահաւաք, որ նախ-
 նական պատմութեան համար դիմած է ժամանա-
 կակից քառասուն աղբիւրներին, այդ պատճառով
 նա անպայման հեղինակութիւն չպէտք է
 համարուի. բազմաթիւ փորձերից յայտնի է,
 թէ ի՞նչ տարօրինակ բողբոջներ է տալիս պատ-
 մական սերմն, ընկնելով աւանդութեանց ան-
 հաստատ հողի վերայ: Մի կողմ թողնելով այն
 խնդիրը, թէ ի՞նչ կերպ է օգտուել այս զրոյցներից
 ինքն խորենացին, գէթ ի նկատի է առնելու,
 որ ա. պատմական անցքեր դարերի ընթացքում
 հարկաւ արտադրուած են, իսկ պատմական
 անձինք՝ դիւրապէս. սեպհական անուններ
 խառնաշփոթած են ժողովրդից (կամ խորենա-
 ցուց) կամ նորագոյններով փոխարինուած. բ. մեր
 պատմագիրը դիւրաբանաւ եւ պարսկաւ աւան-
 դութիւնները խառնիխուռն միմեանց է կցել. գ.
 այս զրոյցների հարուստ մասը հայ ժողովուրդը
 փոխ է առել օտար ազգերից կամ ինքն խորենացին
 գիտութեամբ փոխադրել է հայ հողի վերայ.

(վերջին դէպքում «պատմահօրը, ճոխ նիւթ կը մատակարարէին մանաւանդ Կր... աղբիւրներ»)։¹

Է. Չամչեանին դեռ ներելի էր՝ իւր ժամանակի պատմական գիտութեան վիճակին համաձայն՝ Խորենացու առասպելներին ոչ միայն լիովին հաւատ ընծայել, այլ անգամ «հայկազն» թագաւորների իշխանութեան տարիները որոշել...։ Բայց երբ 19-րդ դարի վերջերից սկսած մի շարք գիտնականներ պատառեցին Խորենացու քօղը, երբ մեզ յայտնի եղաւ վերջերս, թէ ո՞վ էր բազմահմուտ Ասորի Մար Աբաս կատինայ եւ ո՞ր դարում նա կ'ապրէր, այժմ պէտք է որ մեր պատմագրի նոյն իսկ ամենաջերմ պաշտպանները գոնէ աւելի լուրջ քննական աչքով նայէին նորա «կորովի, քաջագանգուր,՝ սկայ դիւցազնների» վերայ։ Սակայն փորձը մի անգամ եւս ցոյց տւեց, թէ որչափ դեռ զօրեղ է «պատմահօր» կախարդիչ ազդեցութիւնն. ահա՛ այս ազդեցութեան տակ Սկ. Բանասէր ուրարտեան թագաւորների թագով հայկազն հերոսներին կը պսակէ. սեպածեւ արձանագրութիւններից այժմ պարզւեցաւ հարկաւ, որ

Արմենակ = Արգիտիս

Արամայիս = Սարգուր Բ.

Հրաչեայ = Ռուսա Ա.

Սկայորդի = Ռուսա Բ.

1 Խորենացու Ա. եւ մասամբ Բ. գրոց աղբիւրների խնդիրը աւելի ընդարձակօրէն շօշափելու եւ՛ առանձին ուսումնասիրութեան մէջ։

անգամ՝ Պարոյր «Սարիգուրիս Գ-ի յաջորդն
 ԸԼԼԼ կը թուի»,¹ հետեւելով Խորենացու
 անյաջող մեկնութեանն, թէ «Արմենակ . . .
 զլեանն անուանէ յանգագոյն յիւր անունն
 Արագած»,² Սկ. Բանասէր «Արգիշտիսի՝ Արա-
 գած ԸԼԼԼուն կասկած չունի» (!): Ջ. դարից
 սկսած հեղինակը ըստ «պատմահօր», եւ քսենո-
 փոնի կը գծէ երկրիս «հաւանական», պատմու-
 թիւնն. փոյթ չէ, եթէ այդ «հաւանականը»
 առասպելական լինի. եւ յիրաւի, ինչո՞ւ չըն-
 դունել, որ «հաւանակաւոր ունեցած ենք
 Երուանդ մը՝ (քսենոփոն) Կիաքսարի յաջորդ
 Աժդահակայ (584—558) ժամանակակից»,³
 Սակայն, դեռ մի կողմ թողած քսենոփոնի
 հանրածանօթ վիպական ոճը, յոյն պատմագիրը
 ոչ մի անգամ չէ յիշում Երուանդ անունն, բաւա-
 կանանալով «հայ», անուանակոչութեամբ: Հա-
 մառօտիւ յիշելով Տիգրանայ շահատակու-
 թիւնները, Դր. Տաղաւարեան նորանից յետոյ
 Հայոց արքաների գահը կը բարձրացնէ վիշապա-
 քաղ Վահագն աստուածը, որի մասին երգիչք
 կ'երգէին՝

Երկնէր երկին եւ երկիր,
 երկնէր եւ ծիրանի ծով,
 երկն ի ծովուն ունէր
 Չկարմրիկ եղեգնիկն եւ այլն.

¹ Սկ. Բանասէր, էջք 12-17:

² Խորենացի, էջ 80:

³ Նոյնտեղ, էջ 25:

⁴ Նոյնտեղ, 17:

«Այլ ասէին զսա եւ աստուածացեալ», աւելացնէ մեր պատմագիրը, կարծես ինքն եւս ըմբռնելով առասպելիս դիցաբանական իմաստը, «եւ անդ յաշխարհին Վրաց զտորա չափ հասակի կանգնեալ՝ պատուէին զոհիւք»¹ Պաշտէին նորան եւ Հայք դ. դարում, որի վահագնեան մեհեանը Տարօնումն էր:² Հարկաւ, հայ Ողիմպոսի վերայ բաղմած անմահ վահագն (= Աւետայի վերելքի համ Արտիս) չպէտք է հրապուրէր աշխարհային ունայն փառքով եւ ապստամբէր Գարեհ Ա-ոյ դէմ: Այս լուսաբեր աստուածը, որի ծնունդն արեւի ծննդեան սքանչելի նմանութիւնն կը բերէ, նւիրել է ազգին դիւցազանց մի ամբողջ սերունդ մինչեւ վան, որոնք «հաւանակաբար Հայաստանի հիւսիսային արեւելեան կողմն՝ Երասխի եւ Կուրի միջեւ ազգային իշխաններ էին»³ . . . (!) Սիրով կամէինք հաւատալ, բայց փաստեր . . . :

Այս 8 հայկազն իշխանների շարքում վահագնից յետոյ մանաւանդ նշանաւոր կը հանդիսանայ վերջընթերն՝ վան, որ «ըստ մեր պատմահօր, նորոգած է Տուսպան եւ իր անուամբ վան անուանած է զայն», այս տեղեկութիւնն նոր է թէ՛ մեզ եւ թէ՛ նոյն իսկ

¹ Խոր. էջ 127—128:

² Ագաթանգեղոս, էջ 602—603. «Լուս Գրիգորիս՝ թէ վահագնեան մեհեանն մեացեալ է յերկրին Տարօնոյ, մեհեանն մեծազանձ . . . անուանեալն վիշապաքաղն վահագնի»:

³ Սկ. բան. էջ 18:

« պատմահօր » համար, որ զգուշացել է այս պատիւը « Աւան հայկազնին » վերագրել:

Ամէն մի գիտական գործի գլխաւոր արժանիքն են նախ՝ նիւթը եւ ապա՝ այդ նիւթից օգտւելու եղանակը (Méthode): Ժամանակակից պատմագիրը երբեք տատանւելու չէ իւր ընտրողութեան մէջ՝ արդեօք ազատ է թողնելու պատմութեան մթին էջերը, որ տակաւին փոփոխելու չեն լուսաւորած, թէ լեցնելու է նոցա առասպելներով:

Դր. Տաղաւարեան գերադասած է երկրորդն:

Գ.

« Հայոց քաղաքակրթութեան պատմութիւն մինչ ցարշահունի » Սկ. Բանասիրի գործին երբեք մասն է:

Եթէ երկրիս քաղաքական պատմութիւնն ալեւոր հնութենում տեղ տեղ խորհրդաւոր քօղի տակ թագնւած կը մնայ, առաւել եւս դժարին է տասնեակ դարերի հեռաւորութեան վերայ թափանցել ժողովրդի հոգեւոր գործունէութեան գաղտնիքների մէջ, որոշել նորա քաղաքակրթական յառաջադիմութեան գործօնները եւ աստիճանները: Այստեղ, որպէս եւ քաղաքական պատմութեան համար, կարելոր են նախ եւ առաջ փոփոխել, այն ամենը, ինչ որ փաստերից դուրս կը մնայ, հարկաւ պայմանաւոր է, ուստի գիտական նշանակութիւնից զուրկ:

Ըստ երեւութին Դր. Տաղաւարեան
 մնաւ չէ կամեցել այս դժարութիւնների առջեւ
 կանգ առնել, առանց տատանելու բաժանելով
 մի անորոշ ժամանակամիջոց «ի սկզբանէ (?)
 մինչեւ ց'Արշակունի» ամբողջ-վեց շրջանների:

Ս'ի երկրի պատմութիւն որոշ շրջանների
 բաժանելու համար կարեւոր է ի նկատի առնել
 այն գործօնները, որոնք նոր ընթացք են տւել
 ժողովրդի քաղաքական եւ ներքին կեանքին.
 այսպէս, Հռովմէացւոց պատմութիւնն գիտէ
 Յ խոշոր շրջաններ՝ ա. թագաւորական Հռովմ
 (քաղաք Հռովմ). բ. Հասարակապետական
 (Իտալիա) եւ գ. կայսերական (հին աշխարհ):
 Եթէ մենք, հետեւելով Սկ. Բանասիրին, Հայոց
 պատմութիւնն սկսենք նախնական ժամանակով,
 որ «կ'երկարի ի սկզբանէ (?) մինչ ժ.Ձ. Դ.»
 ստիպւած կը լինինք նորա հետ միասին
 խոստովանել, որ «այս շրջանի քաղաքակրթ-
 թութեան մասին որ եւ է որոշ գաղափար
 չունինք»: Շատ ճիշդ է. ուրեմն ջնջելու է
 հանգիստ խղճով այս առաջին «շրջանն», որ
 ամբողջապէս հեղինակի a priori ենթադրու-
 թեան վերայ է հիմնւած:

Պատմութեանն ծանօթ չէ նմանապէս ոչ
 թի Ժ. «եգիպտական տիրուպետութեան
 մասին» ի Հայս, որ հեղինակը իբրեւ բ. շրջան կը
 ճանաչէ (Ժ.Ձ.—Ժ.Ե Դար): Ինչպէս վերեւում
 տեսանք, Եգիպտացոց քաղաքական ազդեցու-
 թիւնն հարաւային Ասորիքից հեռու չէ անցել:
 Սկսնակ Բանասէր կը ճգնի սակայն այս ազ-

դեցուժեան ինչ ինչ հետքեր պտրել մեզանում:
 «Հաւանականաբար Հայք (ԺԶ դարում!)
 յեգիպտացոց ուսան գարեջուր պատրաստելն»
 (որ քաջ ծանօթ էր եւ Ատորեստանեայց),
 «հաւանականաբար եւ Կնդոնոպոլիսն
 եգիպտացոց օրերէն մնացած է» մեզանում՝
 երեւոյթս սակայն նկատելի է ցարդ արեւելեան
 ինչ ինչ ազգերի, երկրագնդիս նոյն իսկ վայրի
 ցեղերի մէջ, որոնք եգիպտոսի հետ ոչ մի
 առնչութիւն չեն ունեցել: Սկ. Բանասէր
 կամի, անյայտութեան խաւարի մէջ խարխափե-
 լով, աւելի եւս խոշոր գիւտ անել, ենթա-
 դրելով, որ «գուցէ՛նշանագրերով գրականութիւն
 մ՝ալ մուտ գտած է յայնժամ ի մեզ ըստ
 եգիպտականին . . .» Այսպիսի լուրջ եւ
 գիտութեանն անծանօթ խնդիրներ վստահու-
 թեամբ յուզելու համար մաւական չեն լոկ
 «գուցէ, ներ:

Բարեւոյցիք եւ Ատորեստանցիք, իբրեւ
 Հայաստանի մերձաւորագոյն հարեւանները,
 անշուշտ իրանց գերազանց կուլտուրայի ազ-
 դեցուժիւնն պիտք է դեռ հնումն դրոշմէին
 երկրիս բնակչաց հոգեւոր կեանքի վերայ.
 այստեղ մենք կանգնած ենք պատմական հողի
 վերայ, ունինք բազմաթիւ յիշատակարաններ:
 Սակայն մենք չենք վստահանում Սկ. Բանասիրի
 հետ դրականապէս պնդել, որ «ասորեստանեայց
 ազդեցութիւնն կը սկսի ԺԵ դարէն» ոչ ուշ,
 ոչ շուտ. ինչո՞ւմ արտայայտեցաւ այդ ազ-
 դեցուժիւնն նախ եւ առաջ, երկրի ո՞ր մասնում

որ «բե-ի» (Ardinis) պաշտամունքը (որ հնոց բոլոր ազգերին ծանօթ էր) միայն Ասորեստանեայց միջոցով մուտք է գործել ի Հայս: Գեռ. НИКОЛЬСКІЙ իրաւացի նկատել է, որ «Ուրարտացոց կրօնը, ինչպէս եւ լեզուն, գրեթէ միանգամայն տարբեր էին ասուրականից, չնայելով որ մի քանի աստուծոց գաղափարանիշներ համանման են ասուր-բարեւոյցոց¹»: Պարզ չէ խաբէ վեհագոյն աստուծոյ էութիւնն. յամենայն դէպս մեր նիւթը բնաւ չէ արդարացնում Գր. Տաղաւարեանի եզրակացութիւնն, թէ խաբէի = լուսնոյ աստուածն էր. վերջինս կը յիշէ Սելարդէ (Si-e-la-ar-di),² ոչ թէ խաբէի անւամբ, եւ կը նշանակի ասուրացոց լուսնին յատուկ գաղափարանիշով (▷▷|◀◀):

Վերին աստիճանի չոր եւ ցամաք կը գծէ հեղինակը ուրարտացոց արւեստների ընդհանուր պատկերը՝ «Նախահայք Ասորեստանեայց նման կը ճանաչէին մետաղներն, որոնցմով զէնքեր ու զարդեր կը պատրաստէին, գիտէին եւ կերպասներ հիւսել, ջրմուղներ եւ ճանապարհներ շինել»: Գոնէ յիշելու էր Մենուասի հուշակաւոր ջրանցքների մասին Արտամեդում, Բերկրիում, Արծուաբերդում, Մանաւազակերտում եւ Խոթանլուում, թագաւորաց քարաժայռ դամ-

¹ Братская помощь, 45.

² Schulz, XVII, 7/40; Sayce, JRAS, V; H. Winckler լուսնի պաշտամունքի նախահայրենիքն ոչ թէ Ասորեստան, այլ խառան քաղաքն կը համարէ, որտեղից նա ապա տարածւեցաւ ամբողջ առաջաւոր Ասիա:

բարանների մասին ի վան,¹ որ ճանապարհորդաց զարմանքն կը յարուցանեն, լեմանի եւ Բելքի ձեռնարկած պեղումների մասին:²

Չգիտեմք ի՞նչ կապ ունին այս շրջանի «քաղաքակրթութեան», պատմութեան հետ «չառ մը աշխարհագրական անուններ, որոնք սեպածեւ արձանագրութեանց մէջ դիւրաւ կը ճանչցուին» (աւելի պատշաճաւոր կը լինէր երկի Ա. մասնում յիշել). հեղինակի առաջարկած մի քանի աշխարհագրական անուններն հազիւ թէ «դիւրաւ ճանչցուին» մեր մասնագրերից յիշած անւանց շարքում, լինելով նոյն իսկ արտաքին նմանութիւնից զուրկ, օրինակ՝

Ուշիտուինի	=	Օշական
Ուելիտու	=	Ուտի
Արգիստինիլի	=	Արագածոտն
Ռիշուանի	=	Ռշտունի

Նոյն տեսակ սոսկ բառախաղերով լի է եւ պ. Բասմաջեանի վերջերս հրատարակած հայ նախարարութեանց «լիակատար ցանկն», որ Դր. Տաղաւարեան կը բարեհաճի առանց այլեւայլի «աջող» համարել. բաւական է միայն յիշել, որ պարոնը փոխանակ Argistixinis ցարդ Rapisxinis (!) կը կարգայ:³

Մեր աղբիւրները ներկայումս թոյլ չեն տալիս Ասորեստանեայց ի Հայս դրոշմած

¹ Belck, Verh. d. Berl. anthrop. G. 1900, 57—58.

² Աճ, էջ 39—41.

³ Յես իմ «Մի դպինեայ պսակ պ. Բասմաջեանի ճակատին», Հանդիս Աճ. 1902, Դեկտ.

ազգեցութեան սահմաններն որոշել. խնդիրս դեռ կարօտ է ուսումնասիրութեան. առ այժմ միակ խոշոր «կուլտուրական» փաստը՝ սեպաձեւ նշանագրերի փոխ առնելն է: Հարկաւ, բարելացոց հռչակաւոր աստեղագիտութիւնն, նոցա մեծածաւալ աշխարհաստեղագիտութիւնն պէտք է տարածւէին եւ հարեւան ազգերի մէջ, գերելով նոցա երեւակայութիւնն: Յամենայն դէպս արդէն է. դարում այս ազգեցութիւնն վերին աստիճանի թուլացած էր, երբ նոր ազգերի գրոհակները հեղեղեցին Հայք եւ վերջ դրին Վանայ տէրութեանն:

Եկնոր ազգը, որ Հայոց աւերակների վերայ իւր իշխանութիւնն հաստատեց, Պր. Տաղաւարեան կը համարէ փոխեցիք (իմա փոխեցիք). այս ինթագրութեանն (որ հիմնած է «արժանահաւատ պատմչի մը՝ Հերոդոտի» ցուցման վերայ) աւելի զօրութիւն տալու համար պարոնը Դանիէլեան գրերը փոխական կը կարծէ,¹ նոյն իսկ հայ եւ փոխական լեզուների մէջ ինամութիւն կը տեսնէ² . . . Սկ. Բանասէր, իրրեւ «Բանասէր», չպէտք է մոռանար մի փաստ, որ լեզւաբաններին նոյնչափ ծանօթ է փոխական, որչափ եւ լիւկական, էտրուսկների լեզուները եւ կամ Հիտիտների խորհրդաւոր նշանագրերի իմաստը:³

1 Սկ. Բանասէր, էջ 26.

2 Նշմանդ, էջ 8.

3 Ferd. de Saussure, Recherches archéologiques 1893—94, Paris, 106.

Հայ այբուբենի ծագման խնդիրը տակաւին ուսումնասիրութեան առարկայ է. Գր. Մարկարտի արեւելագէտների ՃԳ. Համաժողովին ներկայացրած փորձը¹ ցոյց տւեց, որ խնդիրս ներկայումս ընտիր եւրոպացի գիտնականաց միտքը կը զբաղեցնէ: Արդարեւ, տեսութիւններ առաջարկել աւելի դիւրին է, քան նոցա ապացուցել. ահա՛ թէ ինչո՞ւ մեր ժամանակ բաղմաթիւ լոյս տեսնող ուսումնասիրութիւններից միայն հազազիւտները բախտաւոր բացառութիւն կը կազմեն, իբրեւ լուրջ եւ տոկուն աշխատութեան արդիւնք: Ինչ օգուտ պնդել, թէ «Հայ իշխանք հաւանկարար սկսան գործածել փոխական դիւրին տառերն՝ սերեալ ի փիւնիկականէ», ինչպէս Սկ. Բանասէր², կամ կարծել, թէ «Հայ այբուբենն պարսիկ սեպածեւ գրերէն սերած է», ինչպէս պ. Բասմաջեան³, եթէ հնարաւոր չէ քայլ առ քայլ «ըդուցնել այս «կարծիքները», պարզ եւ անդրդելի ապացոյցներով: Յուսալու է, որ լազարեան ճեմարանի խորհրդի յայտարարած մրցանակն՝ «Հայոց այբուբենը եւ Ս. Մաշտոցի վարքը», առաջ է բերելու եռանդուն մրցումն մասնագէտերի մէջ եւ առնւազն դիւրացնելու խնդրիս վերջնական լուծումն:

Սելեւկիացոց կարճատեւ իշխանութիւնն

¹ Ցես Հանդէս Ամս. 1902, Նոյեմբեր.

² Սկ. Բան. 27.

³ Նոյնտեղ 29.


ի Հայս (323—160) Սկ. Բանասէր «Յունաց
 ազգեցութեան ժամանակ (Ձ-րդ շրջան!)»
 կ'անւանէ եւ ահա՛ թէ ինչիւ. «Յոյն բարբառն
 սկսաւ գործածուիլ ի Հայս՝ գոնէ զարգացելոց
 կողմանէ, որով եւ Յոյն գրականութիւնն...
 ժողովուրդն ի կիր կ'արկանէր յոյն տառերն՝...»
 Դարձեալ սոսկ ենթադրութիւն. Գրքն այն է,
 որ՝ ինչպէս ինքն հեղինակը իրաւացի կը նկատէ՝
 «Դժբաղդաբար այս շրջանի յատուկ որ եւ է
 գրական բեկոր հասած չէ մեզ»։ Այս խոստովա-
 նութիւնն ինքն ըստ ինքեան արդէն բաւական
 է։ Հետեւաբար «Յոյն բառերը, յոյն քերական
 ձեւեր, եւ ի մի բան յունաբանութիւն»
 չէին կարող «այս շրջանի մէջ ի մեզ մուտ
 գտնել», այլ ամենավաղն Դ. դարում, երբ
 քրիստոնէութեան ճառագայթը արեւմտքից
 փարատեց Հայոց հեթանոսութեան խաւարը
 եւ ապա Ե. դ. յունաց դպրոցները լայն բաց
 արին իրանց դռները գիտութեան ծարաւի հայ
 երիտասարդների՝ անջեւ։ Այնուհետ սկսեցաւ
 անխոնջ եւ քրտնաջան աշխատանք օտարու-
 թեան մէջ եւ վանօրայքում՝ ի պէտս մտաւոր
 լուսաւորութեան, հոգեւոր բարգաւաճման հայ
 ազգիս։


Դր. Տաղաւարեանի «Հայոց պատմու-
 թիւնն», նոյն իսկ իբրեւ «փորձ» չէ կարող
 աջող համարիլ. ինչ ինչ խոշոր թերութիւններ


եւ մանաւանդ հեղինակի բուն հակումն
դէպի մերթ անհիմն, մերթ անապացուցելի
ենթադրութիւններ կը զրկեն նորա երկը
բնորոշ նշանակութիւնից: Յանկալի էր, որ
նման փորձեր մեզանում հիմնած լինին հեղե-
նակի աւելի լուրջ պարտադրանքներ; եթէ
չասենք մասնագիտութեան, նիւթիս բողբոջմանի
եւ խորին ուսումնասիրութեան վերայ. միայն
այս դէպքում գործը կարող է օգտաւէտ
“առաջնորդ” ծառայել եւ ճիշդ գաղափար
տալ ազգիս ալեւոր անցեալի մասին:

Ա. ԽԱՆԱԹԵԱՆՅ









[504]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220033416

ЦЕНА

A 11
33416